№ 66 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 23

1908

ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 23 № 66

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎԻ, Д. З. Сараджевъ

Գործարանների գրասենեակից ԹԻՖԼԻՍՈՒՄ

ЗАВОДСКАЯ МАРКА

Ի նկատի ունենալով այն, որ նորերս ի վաճառ են հանվել սեղանի զտված գինի եւ օղի

„ԸՆԿ. Գ. Մ. ՍԱՐԱՋԵՎ" "Т-во Г. М. Сараджевъ"

ֆիրմայով և մերինին կատարելապէս նման էտիկետներով, անկասկած նպատակ ունենալով մոլորեցնել պ. պ. սպառողներին, գրասենեակը խնդրում է վերջիններից ուշադրութիւն դարձնել մեր գործարանների արդիւնքները գնելու ժամանակ **„Դ. Զ." „Д. З."** անուան եւ ազգանուան սկզբնական տառերի վրա՝ էտիկետների վրա, և ժայռի վրա «այծեամ» գործարանական դրոշմի վրա։

(23, 25, 26, 27, 28, 29) տռ. 25—1

→ ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ ←

Երեքշաբթի, մարտի 25-ին
Հաւլաբարի նորակազմ հայ դրամատիկական խումբը

Յօգուտ
ս. Կարապետ եկեղեցու ծխական դպրոցի

կը ներկայացնէ

ԱՊԱՀԱՐԶԱՆԻ
ՍԻՒՐՊՐԻԶՆԵՐ

Կօմեդիա 3 արար., հեղ. Բիսսօնի և Մարսի, թարգ. Արմէնեանի և Տիրացեանի

Մասնակցում են օր. Աղամեան, Ծուրինեան, տ. Զաբէլ, Տէր-Առաքելեան, պ. պ. Արմէնեան, Իփէկեան, Միրզօյեան, Տէր-Առաքելեան, Լաքա, Ղազարեան և այլք։

Տեղերի գները 2 ր. մինչև 20 կ.։

Տոմսակները կարելի է ստանալ Թատրոնի կասսայում։

Սկիզբն է 8 ժ. երեկոյեան։

Վարչութիւն՝ օր. Աղամեան
Ռեժիսոր՝ Արմէնեան

(կ. ե.) տռ. 2—1

Մարտի 23-ին, կիրակի, երեկոյեան ժամը 6-ին, Թիֆլիսի բօրսայի շինութեան մէջ (գրասենեակ վաճառականների պ. աւագի) նշանակված է

Կաթողիկոսական ընտրութեան հարցի համար

ԺՈՂՈՎ,

որին ներկայ կարող են լինել այդ ընտրութեան կողմնակից անձինք, ստանալով առաջուց անուանական հրաւիրատոմս, որի համար պէտք է դիմել Կովկասի հայոց բարեգործական ընկ. և վաճառականների գրասենեակները։ Այդ ժողովին պ. Լէօն կը ներկայացնի զեկուցում (պատմական տեսութիւն) կաթողիկոսական հարցի մասին։

Օգտվեցէք ԴԷՊՔԻՑ

Գործի տեսակէտից անհրաժեշտ պէտք զգալով Թիֆլիսում մեր նոր սկսած ամենաապահով ու շահաւէտ գործարանը մեծացնելու, մենք պէտք ունենք մի խելահաս և դրամ ունեցող ընկերի։ Ամեն մի ազնիւ, անկեղծ մարդ, որ իր դրամով ուզում է գեղեցիկ արդիւնք և տոկոս ստանալ—թող բարեհաճի գալ մեզ մօտ և ծանօթանալ գործի ու պայմանների հետ և նոյնպէս համոզվել մեր ասածների ճշմարտութեանը։

Հասցէ. Механическое столярно-плотничное заведеніе „ПРОГРЕССЪ", уголъ Велико-Княжеской и Семеновской.

(կ. հ.) տռ. 2—2

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Սրանով պատիւ ունի յայտարարելու ի գիտութիւն իր յարգելի յաճախորդների, որ գրատունը կը վերսկսի իր գործունէութիւնը ամենակարճ ժամանակամիջոցում։

(կ.) տռ. 2—1

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

II

Դէպքերը այնպէս են դասաւորվել, որ կաթողիկոսական թեկնածուների շարքում յիշատակվում է նաև Սուրէնեան եպիսկոպոսի անունը։

Այն հանգամանքը, որ Սուրէնեանը ներկայումս կաթողիկոսական տեղապահ է և Էջմիածնի հոգևոր միաբանութեան գլխաւորը, ասպարէզ է մղել նրա անունը իբրև կաթողիկոսական թեկնածուի։

Կանգ առնենք այդ անուան վրա և տեսնենք թէ որքան հաւանականութիւն ունի նա թեկնածուների շարքը մտնելու։

Պէտք է նկատել, որ դեռ ոչ մի տեղ բարձրաձայն, իբրև դրական առաջարկութիւն, լուրջ կերպով չէ դրվել այդ թեկնածուի անունը։ Եւ այժմ էլ նրա անունը ամեն տեղ առաջ է բերվում կարծես պատահաբար, ի միջի այլոց։

Բայց և այնպէս յիշվում է մասնաւոր խօսակցութիւնների մէջ։

Տարիների ընթացքում Սուրէնեանի անուան հետ մինչև այժմ չեն եղել կապված ոչ մի լայն ծրագիր, ոչ մի դրական աշխարհահայեացք, ոչ մի գրաւիչ սպասելիք։

Իսկ չէ կարելի ասել, թէ առիթներ չեն եղել Սուրէնեանի համար, որ նա կարողանար ցոյց տալ իր ընդունակութիւնները։

Աստրախանի և մանաւանդ Թիֆլիսի թեմերում նա հարիւրաւոր առիթներ ունէր ասպարէզի վրա դնելու և իրագործելու իր ծրագիրները, եթէ այդպիսիները եղել են երբ և իցէ։

Մենք ուզում ենք ամենայն անաչառութեամբ հաշիւ տալ մեզ այդ թեկնածուի վերաբերութեամբ։

Ի՞նչ է ասում մեզ Թիֆլիսի նրա առաջնորդութիւնը։

Սուրէնեանը, ճիշտ է, փորձեց մի երկու անգամ հանդէս գալու կուլտուրական առաջարկներով, բայց հէնց ինքը առաջինը եղաւ, որ չը պաշտպանեց նրանց և թոյլ տուեց, որ նրանք թաղվեն և մոռացվեն առ միշտ։

Մի անգամ նա հանգուցեալ Կ. Բեհբութեանի յորդորանքով հրաւիրեց ժողով խորհրդակցելու ծխական հոգաբարձութիւններ ստեղծելու մասին։ Հաւաքվեցին բաւական թւով անձեր և մի երկու նիստերում մշակեցին ծխական կանոնադրութիւն։ Սակայն գործը այլևս ընթացք չը ստացաւ և յետոյ բոլորովին մոռացվեց։

Մի ուրիշ անգամ, ընտրութիւնների ժամանակ, նա փորձեց զանցառութիւնների և զեղծումների առաջն առնել, բայց յետոյ շատ շուտ ենթարկվեց որոշ թելադրութիւնների և սկսեց ղեկավարվել քմահաճոյքներով։

Մի երրորդ անգամ, երբ թեմական դպրոցի՝ այն է Ներսիսեան դպրոցի վերաբերութեամբ առաջ եկաւ հոգաբարձական իրաւունքների սահմանափակման խնդիրը, նա ոչ թէ միջոցներ ձեռք չառաւ հոգաբարձական լիազօրութիւնները ամրապնդելու, այլև ընդհակառակը նա ամեն կերպ աշխատեց նսեմացնել հոգաբարձութեան նշանակութիւնը և նրանց նկատել իբրև ստորադրեալ և երկրորդական մի մարմին, որը պէտք է համակերպվի առաջնորդական թելադրութիւններին։ Եւ նա ձևակերպում էր իր գործելակերպը այսպէս. «որովհետև կաթողիկոսի առաջ պատասխանատու մարմինը առաջնորդն է, ուստի և առաջնորդը պէտք է լինի կարգադրիչը բոլոր գործերում, իսկ կօլլեգիան ունի միայն խորհրդակցական, միայն մի յաւելեալ մարմնի նշանակութիւն»։

Նրա օրով մի գեղեցիկ առիթ ներկայացաւ Էջմիածնի կալուածական բարեկարգութեան գործի կազմակերպութեան համար մի բարի օրինակ տալու, այն է հարց յարուցվեց բարեկարգել Մարցի կալուածքի կառավարութիւնը և շահագործութիւնը։ Կազմվեց մի յատուկ յանձնաժողով, բաղկացած մասնագէտներից և հմուտ անձերից, որոնք ոգևորութեամբ մտեցան գործին, և մանրամասն ուսումնասիրելով խնդիրը, մշակեցին գործունէութեան ծրագիր։ Եւ Սուրէնեանը կարծես համակրում էր գործին։ Բայց յետոյ վախեց զանազան պատասխանատուութիւններից և ծախքերից, ձգձգեց խնդիրը և ապա բոլորովին քնացրեց նրան մինչև մեր օրերը։

Ժողովրդական անտարբերութեան հետ զուգընթաց՝ հոգևոր դասի, երէցփոխների և եկեղեցական գործողների մէջ նրա օրով լքումն առաջացաւ, որը զրկեց նրան ժողովրդականութիւնից։

Նրա օրով կողմնակալութիւնը կամ ֆավօրը ստացաւ գունաւոր բնաւորութիւն։ Եւ մենք տեսնում էինք սիրելի և ոչ սիրելի, հովանաւորեալ և ոչ հովանաւորեալ դասերի բաժանում հոգևորական ստորադրեալների շարքերում։

Մի այնպիսի հարցում, ինչպէս է Ներսիսեան դպրոցի նոր շէնք կառուցանելու հարցը, նա թէ ուղիղ և թէ կողմնակի ազդեցութիւններով չքացնում էր հոգաբարձութեան ջերմ ցանկութիւնը՝ կատար ածելու այդ կարևոր գործը։ Հոգաբարձական իրաւունքների վերաբերութեամբ օգտվում էր ամեն մի դէպքից նրանց սահմանափակելու և միւս գործառնութիւնների մէջ նեղացնում էր ժողովրդական կամքի արտայայտութեան ծաւալը։ Եւ հոգաբարձուները մի երկու անգամ ստիպված էին դիմումներ անել կաթողիկոսին, որը այդ ժամանակները տրամադրված էր Սուրէնեաններին թև տալու ժողովրդական քուէի և իրաւունքների սահմանափակման ձգտումների մէջ։

Վերջ ի վերջոյ ժողովուրդը սառեց, իսկ հոգևոր դասը իր վստահութիւնը կորցրեց դէպի իր առաջնորդը և այլևս չէր նայում նրա վրա, իբրև անաչառ դատաւորի, հօր և ղեկավարի վրա։

Եւ երբ Սուրէնեան հեռացաւ Թիֆլիսի թեմից, նա ոչ մի ցաւ և ափսոսանք չը պատճառեց իր հօտին, ինչպէս մի ժամանակ նոյնը եղաւ և Աստրախանի թեմի հօտի հետ։

Սուրէնեանը արտաքուստ ունի մի քանի բարեմասնութիւններ։ Ունենալով միջնակարգ ուսում և լինելով Թիֆլիսում մեծացած մի անձ, ունի որոշ բարեկրթական յատկութիւններ. գիտէ պետական լեզուն և կարող է առանց թարգմանների խօսել պաշտօնական անձերի հետ։

Բայց նրա գործունէութիւնը չէ տուել այնպիսի դրական կողմեր, որոնք իրաւունք տային դնելու նրա անունը Էջմիածնի հոգևոր պետի թեկնածուների ցուցակում։

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսին հեռագրում են.

Բաթում, 22 մարտի

Կովկասի Փոխարքայ կոմս Վորօնցով-Դաշկովի յոբելեանը շնորհաւորելու համար պատգամաւորներ են ընտրվել. հայ հասարակութեան կողմից՝ Արշամ Չիլինգարեան, հայ-գրիգորեան և հայ-կաթօլիկ դպրոցների հոգաբարձութիւնների կողմից՝ Լևոն Պապօվեան և Պալ Զաքարեան և Արդուինի քաղաքի հայ ազգաբնակութեան կողմից՝ Յակոբ Փիլօյեան, որոնք կիրակի օրը մեկնում են։

Թուղադեան

—

Երէկ ստացանք հետևեալ հեռագիրը.

Կարեագին, 26 մարտի

Վարակիչ հիւանդութիւնները Տողի հովտում օրէ-օր ընդարձակ չափեր են ընդունում։ Զոհ են գնում թէ մեծերը և թէ փոքրերը։ Բժշկական օգնութեան մեծ կարիք է զգացվում։

Իսրայէլեան

—

Հռոմ, 21 մարտի

Սպանված բանւորին թաղելու ժամանակ, բանւորները ընդհարվեցին ոստիկանութեան հետ։ Ամբոխի միջից սկսեցին քարեր նետել, որոնցից ոստիկանութեան շատ գործակալներ վիրաւորվեցին։ Ոստիկանութիւնը աշխատում էր ամբոխին արգելել մտնել Պիացցա-Վէնետիկ։ Ոստիկանութիւնը իր հերթին կրակ բացեց. երկու բանւոր սպանված են, 12-ը վիրաւորված։ («Հ. Գ.»)

—

Հռոմ, 22 մարտի

Երէկվայ բանւորների և ոստիկանութեան ընդհարման պատճառով այսօր առաւօտեան սկսվեց ընդհանուր գործադուլ։ Պատգամաւորների պալատում քննութեան առնվեցին օրվայ դէպքերը։ Ջիօլիտտին յայտնեց, որ դատական իշխանութիւնը արդէն ձեռնարկել է գործի քննութեան։ Սօցիալիստ պատգամաւորները բացասեցին ընդհանուր գործադուլը և խոստացան ամեն ջանք գործ դնել, որ նա չը տարածվի։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 22 մարտի

Դաւանութեան խնդրով զբաղվող դումայական մասնաժողովը որոշեց վերացնել բարձրագոյն այն կարգադրութիւնը, որ վերաբերում է այն պայմաններին, որոնց համաձայն Լօնդօնի միսիօներին իրաւունք է տրվում քրիստոնէութեան դարձնել Ռուսաստանում բնակվող հրէաներին։ («Հ. Գ.»)

—

Պարիզ, 22 մարտի

Պատգամաւորների պալատում ընդունվեց ամխատրայի օրէնքը։ («Հ. Գ.»)

Վաշինգտօն, 22 մարտի

Սենատը հաւանութիւն տուեց Հաագայի կօնֆերէնցիայի ընդունած որոշմանը, որի համաձայն միջնորդ դատարան է կազմվելու Ամերիկայի, Իտալիայի և Մեքսիկայի միջև։ («Հ. Գ.»)

—

Պետական Դումայի ծայրայեղ աջակողմեան ֆրակցիայի պատգամաւորները հարցապնդում են արել Դումային՝ թէ ինչ հիման վրա կառավարութիւնը թոյլ է տալիս հայերին նոր կաթողիկոս ընտրելու։ («Зак.»)

—

Տխրահռչակ Մենշիկօվը եղեգնի նման օրօրվում է ամենայն օր «Нов. Вр.» թերթում և դիպչում ժանր ազգութիւններին։ «Баку» լրագրին հեռագրում են, որ «Կովկասը փուլ է գալիս» յօդուածում նա շարունակում է իր սկսած արշաւանքը կովկասեան Փոխարքայի դէմ, ապացուցանելով որ կոմս Վօրօնցով-Դաշկովի բարեսրտութեան և դիւրահաւատութեան շնորհիւ այժմ զօրեղացել է հայերի՝ այդ քրիստոնեայ հրէաների յեղափոխականների ազդեցութիւնը ի վնաս մուսուլման ազգաբնակութեան։ Իսկ երէկ այդ ֆլիւգերը այդ միևնոյնը գրում էր մուսուլմանների դէմ։

—

Արդարադատութեան մինիստրութիւնը շրջաբերականներով հաղորդել է դատախազներին, որ սօցիալիստական կուսակցութիւններին պատկանելու համար մեղադրանքները պէտք է յայտնվեն քրէական օրէնքների 102-րդ յօդուածի հիման վրա։ («Б.»)

—

Պետերբուրգից մարտի 20-ին հեռագրում են «Каспій» լրագրին. «Բազմաթիւ խուզարկութիւններն ու կալանաւորութիւնները շարունակվում են։ Երէկ մօտ 20 հոգի կալանաւորել են»։

—

Վանի դէպքերի առիթով մեզ խնդրում են տպագրել հետևեալը.

Ընթերցողներին արդէն լաւ յայտնի է Վանում վերջերս եղած դաւաճանութեան ցաւալի դէպքը իր պատճառած վնասներով։

Ով որ մօտիկից ծանօթ է ընդհանրապէս՝ Վանի գործերին և մասնաւորապէս՝ վերջին դէպքի «հերոս» դէկրցի Դաւիթին, նրան անսպասելի չէր դէպքը իր տխուր հետևանքներով. Նրան պարզ յայտնի է եղել և լինում է, որ այդ՝ անգիտակից, յեղափոխութեան մասին ամենատարրական հասկացողութիւն չունեցող պատանի անփորձ Դաւիթները, որոնց ձեռքում է ամփոփվել կազմակերպութեան ուղն ու ծուծը, ձիւն բերել են ու բերում են՝ առանց այն էլ դժբաղդ վանեցու գլխին։

Փաստերը ակներև են։

Ոչ հեռու անցեալում—սրանից 4—5 տարի առաջ—Գալուստ Զէնճիրկանեան անունով ինչ-որ մի դեռահաս պատանի կենտր. կօմիտէի անդամ էր ընտրվել (?)։ Գիշերները ժամանակցում էր յեղ. ժողովներին, իսկ առաւօտը՝ Սէմէրջեան Խաչիկ անուն ցած արարածի ընկերակցութեամբ բոլոր գաղտնիքը կառավարութեանն էր հաղորդում, որի հետևանքը եղաւ այն, որ կատարվեցին մի շարք մասսայական ձերբակալութիւններ և մի քանի երիտասարդներ զոհ գնացին, որոնց կարգին նաև դրսեցի՝ տեղական ներկայացուցիչ Վարդգէսը, որի գլուխը գնահատված էր 70 օսմ. ոսկի։

Այո, չեշտում ենք, անսպասելի չէր նաև վերջին դէպքը։

Ահա թէ ինչու։

Յիշեալ Դաւիթ ասված ճիւաղը 20—21 տարեկան պատանի էր։ Նա ոչ միայն ծանօթ չէր յեղափոխութեան նոյնիսկ ամենասահմանափակ իմաստին, այլ իր անուն-ազգանունը կանոնաւոր գրել չը գիտէր. չեմ սխալվում, եթէ աւելացնեմ, որ մի վայրենի և սրիկայի մէկն էր։ Եւ ահա մի ամենապատասխանատու գործ, ինչպիսին է ռազմամթերքի պահելը, որից կախված է կազմակերպութեան լինել չը լինելը, յանձնում են մի այդպիսի գծուծ արարածի...։ Շատ պարզ է, որ այդպիսի նկարագիր ունեցող յիմարը ամեն վայրկեան պատրաստ է, կառավարութիւնից կաշառվելով կամ անձնական ոխէ հաշւով, վնասել թէ յեղափոխութեան և թէ ժողովրդին, ինչպէս որ արեց արդէն։

Դժբաղդաբար այս դէպքը ոչ առաջին և ոչ էլ վերջին կը լինի Վանի համար, քանի որ գործը այդ տիպի դեռահաս տղաների ձեռքին է։

Վանեցի

—

Վանից Կ. Պօլսի թերթերին հաղորդում են, թէ այնտեղ մի ընկերութիւն է կազմվել, որի նպատակն է Վանի նահանգի Բերկրի կամ Արբերանի գաւառակում գտնվող նաւթաբեր հողերը շահագործել։ Ընկերութիւնը կազմված է 5000 օսմ. ոսկի դրամագլխով, որը բաժանված է 500 ակցիայի. այնպէս որ իւրաքանչիւր ակցիա արժէ 10 օսմ. ոսկի։ Նաւթաբեր վերոյիշ եալ վայրը գտնվում է Վանից 18 ժամ հեռաւորութեան վրա դէպի հիւսիս, իսկ Վանի ծովից երեք ժամ հեռու՝ դէպի արեւելք, Գործոթ գիւղի մօտերքը:

Վանի նահանգում գտնվող նաւթաղբիւրների մասին վաղուց յայտնի էր, և արդէն սրանից մօտ 38 տարի առաջ վանեցիները մի ընկերութիւն էին կազմել այդ պատուական հեղուկը շահագործելու նպատակով, բայց այդ ընկերութիւնը յետաձգայում, իր անդամների անհամաձայնութեան պատճառով քայքայվեց, և գործը մինչև այսօր մնացել էր անտէր ու անխնամ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

IV *)

Կաթողիկոսական խնդիրը քննելիս, ամենից առաջ երկու հարց պէտք է զբաղեցնեն մեզ. արդեօք, թէ ըստ պատմութեան, թէ ըստ եկեղեցական կանոնական սովորութեան և իրաւունքի, հնարաւոր է կաթողիկոսական թեկնածուներ ընտրել աշխարհականներից և վարդապետներից: Ենթադրենք մի րոպէ, որ հոգևորական դասակարգի մէջ մի որոշ ժամանակ չը կայ յարմար և արժանաւոր թեկնածու, ընտրելի. մի՞թէ հայոց եկեղեցին՝ ժողովուրդը իրաւունք չունի իր պետը, հովւապետը ընտրելու աշխարհականների միջից. մի՞թէ այն դէպքում, երբ եպիսկոպոսական դասի մէջ չը կան յարմար, արժանաւոր ընտրելիներ, նա չէ կարող իր ընտրելին որոնել վարդապետների դասից:

Քննենք այս առաջարկները նախ հայոց եկեղեցու օրէնքների, սովորութիւնների և աւանդութիւնների տեսակէտից և ապա գործադիր օրէնքների տեսակէտից:

Հայոց եկեղեցու նախնական շրջանում, սկսած՝ քրիստոնէութիւնը Հայաստան մտնելուց մինչև Մեծն Ներսէսի ժամանակը և ս. Սահակը, այն է I դարից մինչև V դարը, եպիսկոպոսները և կաթողիկոսները ընտրվում էին աշխարհականների միջից և ամուսնացած էին: Քրիստոնէական ընդհանրական եկեղեցու ոգու և ուսման համաձայն, երբ եկեղեցին, իսկապէս, ինքը ժողովուրդն է, ոչ մի արգելք չը կայ, որ աշխարհականը ուղղակի կոչվի եկեղեցու նուիրապետութեան բարձր աստիճաններին: Եթէ մի աշխարհական իր հմտութեամբ, կրթութեամբ, գիտութեամբ կարող է վարել վարդապետական, եպիսկոպոսական պաշտօնը և ստանձնել այդ կոչումը, ոչ մի արգելք չը կայ, որ նա կոչվի այդ պաշտօնին: Բողոքական կամ լիւթէրական եկեղեցին, որ իր պարզութեամբ աւելի մօտ է կանգնած քրիստոնէական, աւետարանական եկեղեցուն, որքան մենք գիտենք, աշխարհականներից ուղղակի երէց կամ եպիսկոպոս ձեռնադրելու դէմ ոչ մի կանոնական արգելք չունի:

Հայոց եկեղեցու մէջ V դարից սկսած մինչև այսօր սովորութիւն և աւանդութիւն է դարձել տեսնել վարդապետներին, եպիսկոպոսներին ամուրի և կաթողիկոսներին ընտրված՝ եպիսկոպոսների դասից: Միայն մի անգամ կաթողիկոս է ընտրվել ուղղակի մի աշխարհական, 854 թւին, Զաքարիա անունով, որին նոյն օրը ձեռնադրել են սարկաւագ, քահանայ, եպիսկոպոս և կաթողիկոս: Այնուհետև աշխարհականից կաթողիկոս չէ ընտրվել այլևս: Սակայն դա պէտք է նկատել լոկ սովորութիւն, ճշմարիտ է, մի սովորութիւն, նուիրագործված դարերի ընթացքում, որովհետև եկեղեցու ոգու և ուղղութեան ու պարտադիր կանոնների մէջ ուղղակի չը կայ մի արգելք, թէ աշխարհականին չէ կարելի ընտրել եպիսկոպոս կամ կաթողիկոս: Ես հետաղօտեցի Աբէլ արքեպիսկոպոսի աշխատասիրած հայոց եկեղեցու ժողովների պատմութիւնը և չը գտայ մի ժողով, որի որոշումների մէջ լինի այդպիսի մի արգելք:

Ուրեմն կարող ենք ընդունել, որ հայոց եկեղեցու կանոնական օրէնքներով աշխարհականին կաթողիկոս ընտրելու դէմ ոչ մի արգելք չը կայ:

Սակայն արգելքը կայ և գոյութիւն ունի այժմեան օրէնքի մէջ, պօլօժենիայի մէջ, որի համաձայն պէտք է կատարվի կաթողիկոսի ընտրութիւնը: Ճիշտ է, իրա պօլօժենիայի մէջ ոչ մի տեղ ուղղակի չը կայ ասված, թէ աշխարհականից չէ կարելի կաթողիկոս ընտրել, բայց Կովկասի նախկին կառավարչապետի 1883-ին հրատարակած կանոնների մէջ ասված է, թէ 4 թեկնածուները ընտրվում են աւագագոյն բարձրաստիճան հոգեւորականներ: Թէ ինչ հիման վրա են հրատարակված այդ կանոնները, կարո՞ղ են արդեօք նրանք ունենալ օրէնքի պարտադիր ոյժ,—մենք դժուարանում ենք ասել, բայց այս կայ, որ այդ կանոնների համաձայն են կատարվել պօլօժենիայի հաստատութեան օրից մինչև այսօր կաթողիկոսական ընտրութիւնները, ուստի և այս անգամ ևս այդ կանոններով պէտք է կատարվի, քանի որ ոչ մի կաթողիկոս և ոչ ևս սինոդը ոչ մի անգամ հարց չեն յարուցել այդ կանոնների փոփոխութեան կամ վերացման մասին:

Մեր կարծիքով, քանի որ պօլօժենիայի մէջ չը կայ արգելք աշխարհականին կաթողիկոս ընտրելու դէմ, քանի որ 1883-ին հրատարակված կանոնները օրէնքի ոյժ չունեն, աշխարհականից կաթողիկոս ընտրելու հարցը պէտք է յաւենայն դէպս բաց համարել, որովհետև, եթէ ապացուցվի, որ, հայոց եկեղեցու աւանդութիւններով և օրէնքներով, հնարաւոր է աշխարհականից կաթողիկոս ընտրել, այն ժամանակ պօլօժենիայի կողմից ոչ մի արգելք չէ կարող լինել, քանի որ պօլօժենիան ասում է, թէ կաթողիկոսը ընտրվում է համաձայն հայոց եկեղեցու աւանդութիւնների և օրէնքների:

Աշխարհականից կաթողիկոս ընտրելու հարցը կարող է բարձրացնել ինքն ընտրողական ժողովը, երբ կը գումարվի հոկտեմբերին Էջմիածնում, բայց դա գործնական նշանակութիւն չի ունենայ, որովհետև այդ հարցը պէտք է լուծվի օրէնսդրական ճանապարհով և յաջորդ ընտրութիւնների համար:

Ուրեմն, որքան էլ ցանկալի համարենք, բայց առաջիկայ ընտրութիւնների ժամանակ աշխարհականից կաթողիկոս ընտրելու հարցը, իբրև լոկ տեսական հարց, ներկայումս անմիջական լուծումն չէ կարող ստանալ:

Մնում է երկրորդ հարցը, վարդապետներից ընտրելու հարցը:

Եթէ դիմենք հայոց եկեղեցու պատմութեան, մենք կը տեսնենք, որ վարդապետներից ուղղակի կաթողիկոս ընտրելու դէպքեր քիչ չեն եղել: Երբ 1441-ին կաթողիկոսական աթոռը որոշեցին փոխադրել Սսից Էջմիածին, 700 հոգուց բաղկացած ժողովը կաթողիկոս ընտրեց Խորվիրապեցի Կիրակոս վարդապետին. 1603-ին ընտրվեց կաթողիկոս՝ Սրապիոն վարդապետը, 1629-ին՝ Մովսէս վարդապետ Սիւնեցին, 1655-ին՝ Յակովբ վարդապետ Ջուղայեցին, 1763-ին՝ Սիմէոն վարդապետ Երևանցին:

Գալով պօլօժենիային, մենք պէտք է ասենք, որ «բարձրաստիճան հոգևորական» բառը չէ նշանակում, թէ անպատճառ եպիսկոպոսն է «բարձրաստիճան». մենք կարծում ենք, որ ծայրագոյն վարդապետն ևս «բարձրաստիճան հոգևորական» է, քանի որ յաճախ տեսնում ենք, որ վարդապետը ընտրվում և նշանակվում է, թէ սինոդի անդամ, թէ թեմի առաջնորդ:

Ուրեմն ոչ հայոց եկեղեցու կանոնական օրէնքով, ոչ պօլօժենիայի տրամադրութեամբ ոչ մի արգելք չը կայ, որ կաթողիկոսական ընտրելիների ցանկի մէջ մտցնենք և վարդապետներից:

Մնում է այն առարկութիւնը, թէ ո՞վ պէտք է վարդապետին եպիսկոպոս ձեռնադրէ, որպեսզի կարելի լինի յետոյ կաթողիկոս ձեռնադրել: Եթէ կարելի եղաւ, որ եպիսկոպոսները 854-ին աշխարհական Զաքարիային, 1441-ին՝ Կիրակոս վարդապետին, 1603-ին՝ Սրապիոն վարդապետին և այլոց եպիսկոպոս ձեռնադրեին, ինչո՞ւ այժմ կարելի չէ, որ 12 եպիսկոպոսներ վարդապետին եպիսկոպոս ձեռնադրեն:

Այլ հարց է, թէ կա՞ն արդեօք վարդապետական դասի մէջ արժանաւոր թեկնածուներ: Այդ մասին կը խօսենք յետոյ: Առայժմ պէտք է յայտնենք, որ ռուսահայերի վարդապետական դասի մէջ մենք ամենայարմար և արժանաւոր թեկնածու գտնում ենք միայն Բագրատ վարդապետ Վարդազարեանին:

Հ. Առաքելեան

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱԼԱՏԻՑ

—

Պետերբուրգ, 12 մարտի

Պետական Դումայի ներկայ երեսունվեցերորդ նիստի երկրորդ մասը նուիրված էր ընդհանուր ուսման հարցին:

Այնքան կենսունակ և ժամանակակից է այդ հարցը, որ նրա քիչ թէ շատ պատշաճաւոր վճռելու համար կը հարկաւորվեն մի քանի նիստեր: Բայց երևի այս հարցումն էլ առաջ կը մղվեն դասական «բարձր դիտումներ». կենտրոնը Գուչկովի ղեկավարութեամբ կաշխատէ վերջ դնել անտեղի «լիբերալիզմին»:

Ընդհանուր ուսման հարցը ամենքի համար պարզ է ինքնըստինքեան, բայց նրան ինչ ուղղութիւն տալ կեանքում իրականութիւն դարձնելիս, ահա այդ հարցում կարող են առաջ գալ ահագին տարաձայնութիւններ:

Կառավարութիւնը մի քանի անգամ փոխելով իր կարծիքը այդ հարցի վերաբերեալ՝ երրորդ Դումային ներկայացրել է երեք օրինագիծ, որոնցից երկուսը նա անուանել է գործնական և տուել է նրանց բիւջէտային բնաւորութիւն, իսկ մէկին տուել է ընդհանուր ծրագրային բնաւորութիւն:

Ժողովրդական լուսաւորութեան գործերով զբաղվող Դումայի մասնաժողովը, որի կազմը համարեա թէ ամբողջովին բաղկացած է հոկտեմբերեաններից, չէ ցանկացել շեղվել մինիստրութեան ընդգծած շաւղից և երկու բիւջէտային բնաւորութիւն կրող օրինագծեր քննելիս աշխատել է սահմանափակել նրանց գործնական շրջանակների մէջ: Դումայի աջակողմեանները և մեծամասնութիւն կազմող հոկտեմբերեանները կարծում էին, որ այդ հարցը կանցնէ աննշան, հաւատացնելով որ երբ քննութեան նիւթ դառնայ այն երրորդ օրինագիծը, որտեղ արծարծվում են ընդհանուր ուսման վերաբերեալ սկզբունքներ, այն ժամանակ կարելի կը լինի ամենամանրամասն և լայն ճառերի փոխանակութիւն ունենալ, և այդպիսով ուզում էին թաղել ընդհանուր ուսման հարցը: Բայց բարեբաղդաբար այդ նրանց չաջողվեց:

Սօցիալ-դեմօկրատ. ֆրակցիայի ներկայացուցիչը այս հարցում՝ Բէլօուսովը հէնց սկզբից և եթ հարցը գործնական սխալ ճանապարհից հանեց և տուեց նրան իսկական ուղղութիւն: Իսկոյն սկսվեց մի ահագին շարժում. պատգամաւորները, ես առաւել աջից և կենտրոնից, սկսեցին դիմել ամբիօն իրանց թերթիկներով, իսկ Կրուպէնսկին արդէն թերթը ձեռքին մտնենում էր այս և այն պատգամաւորին և հաւաքում հարկաւոր թւով ստորագրութիւն, որպեսզի առաջարկի նախագահին քուէարկութեան դնել, որ խօսել ցանկացողների ցուցակը փակվի և ճառախօսները օգտվեն միմիայն 10 րօպէով: Կրուպէնսկու յանդգնութիւնը այնտեղ է հասնում, որ նա իր թերթով դիմում է և օպպօզիցիային պատկանող պատգամաւորներին, բայց նրանք, ի հարկէ, մերժում են, իսկ կենտրոնը մեծ յօժարութեամբ համաձայնվում է: Կրուպէնսկու այդ առաջարկը տապալվում է և ամբողջ նիստի ընթացքում դեռ շարունակվում է թերթիկներ տալ, այնպէս որ արդէն գրվել են 69 պատգամաւոր:

Ես մի փոքր մանրամասն կանգ առի այս հանգամանքի վրա այն պատճառով, որ դրանով պարզվում է, թէ վիճաբանութիւնները ինչ վախճան կունենան. կենտրոնը և աջակողմեանները պլատօնական, բարի ցանկութիւններ կը յայտնեն ընդհանուր ուսման մասին, բայց նրա իրագործումը վաղաժամ կը համարեն, և դրանով կը վերջանայ ամեն ինչ:

Ժողովրդական լուսաւորութեան մասնաժողովի կողմից զեկուցանում է պատգամաւոր Կօվալեվսկին: Նա երկար և մանրամասն ճառով բացատրում է երկու օրինագծի էական մասերը և յայտնում է, որ մասնաժողովը նրանց միացրել է մի օրինագծի՝ 6,900,000 րուբլու, առաջ մղելով հետևեալ պրինցիպները. որ 1) նիւթական նպաստներ տրվեն այն տեղերին, ուր զգացվում է ուսումնարանների առանձին կարիք, կամ ուր հարկաւոր է օգնութիւն, որ եղած դպրոցները պահպանվեն. 2) նպաստ տալիս պէտք է աչքի առաջ ունենալ նորմա, որ ժողովրդական դպրոցներում ուսուցիչներին տրվի 390 ր. ռոճիկ (50 աշակերտի, 8-ից 11 տարեկան) և ոչ պակաս քան 360 ր., իսկ կրօնուսույցին 60 րուբլի 100 աշակերտի. 3) բոլոր քաղաքային և զեմստվային ինքնավարութիւնները միայն այն դէպքում կարող են նպաստ ստանալ, եթէ նրանք պարտաւորվեն բոլոր այն գումարները, որոնք այժմս նրանք ծախսում են, յամենայն դէպս չը պակասեցնեն. 4) բոլոր տարրական դպրոցներում, որոնք տէրունական նպաստ են ստանում, ուսումը պէտք է լինի ձրի: Վերջացնելով իր խօսքը, ճառախօսը ցանկութիւն է յայտնում, որ ժողովրդական լուս. մինիստրութիւնը նոր ապահովութիւնների մասին մտածի, որովհետև ժողովրդական լուսաւորութիւնը նոյնպիսի անհրաժեշտութիւն է, ինչպէս զօրքի պահելը, դատաստանների գոյութիւնը, երկաթուղիների պահպանելը, մատակարարական գործը և այլն և այլն.—«Յայտնի ֆրանսիական դպրոցական գործիչ Ժիւլ-Սիմօնը ասել է, որ ժողովրդական լուսաւորութեան վերաբերեալ պէտք է լինել առատաձեռն՝ միջոցների վատնելում, և խնայողական՝ ժամանակի վերաբերեալ»:

Սօցիալ-դեմօկրատ Բէլօուսովը մանրամասն նկարագրում է ժողովրդական, գիւղական ուսուցչի մասին, թէ ինչպիսի խոչընդոտների հետ կռւելով են նրանք տանում գիւղացու լուսաւորութեան գործը: Յայտնելով, որ նրանց ֆրակցիան քուէարկելու է այս օրինագիծը դրական մտքով, որովհետև նրանք սրանում գտնում են մի միջոց՝ գիւղացուն, աշխատաւոր դասային արթնացնելու իր տգիտութիւնից, մատնելու են իրանց լրացումները, կանգ է առնում կառավարութեան գործելակերպի քննադատութեան վրա: Նա ընդգծում է, որ կառավարութիւնը միշտ խոչընդոտ է առաջացել ժողովրդական լուսաւորութեանը և այժմս էլ շարունակում է նոյն քաղաքականութիւնը: Մինչդեռ նա, ասում է Բէլօուսովը, զանազան աւանտիւրաների համար միշտ ահագին քանակութեամբ գումարներ է գտնում, ժողովրդին զարգացնելու, ուսում տալու համար նա փող չունի, և հասկանալի է թէ ինչու: Ամօթ է ասել, որ այժմս ամեն մի գիւղական տարրական դպրոց ընկնում է 207 վերստ տարածութեան վրա: Կառավարութիւնը չէ ցանկանում տարածել ժողովրդի մէջ ուսումը և նա զիջում է միայն այն ժամանակ, երբ արտաքին պայմաններն են այդ նրան ստիպում:

Նա խօսում է շատ երկար և համոզեցուցիչ, բայց աջակողմեանների անհամբերութիւնը կամաց-կամաց անցնում է և Խոմեակովի տրամադրութեան վրա և վերջինս մի քանի անգամ խնդրում է ճառախօսից կրճատել իր ասելիքը, այնպէս որ պատգամաւորը ստիպված է լինում ծամծմել իր ճառը և վերջացնում է այսպէս. «Դպրոցը պէտք է ուսուցանի կեանքը այնպէս, ինչպէս նա գոյութիւն ունի: Կռիւ, պայքար—կեանքի օրէնքներն են: Դասակարգային կռիւը հասարակական կեանքի օրէնքն է»: (Աղմուկ է բարձրանում աջակողմեանների և կենտրոնի շարքերում. ծափահարութիւն ձախակողմում:)

Պատգամաւոր Չելյշովը իրան յատուկ համարձակութեամբ խիստ քննադատութեան է ենթարկում ներկայացրած օրինագիծը. յարձակվում է կառավարութեան վրա, որ նա ժողովրդական լուսաւորութեան վրա այնքան քիչ ուշադրութիւն է դարձնում: Նա ասում է, որ 1907 թ. բիւջէտի համեմատութեամբ, այս տարի աւելացված է հիւանդանոցներին և այլն 563 հազար րուբլի, իսկ բանտեր շինելուն 2 միլ. րուբ., օղու համար 23 միլ. րուբ., իսկ ժողովրդական լուսաւորութեան վրա միայն 7 միլ. րուբլի: Փոխանակ բանտերի վրա քիչ գումար յատկացնելու և ուսման վրա աւելի, նրանք կատարում են ընդհակառակը: Մեզ հարկաւոր է ամենամանրամասն հաշիւ, թէ ուր, ինչպէս և երբ են ծախսվելու այդ գումարները, որովհետև մենք տեսնում ենք, որ մեր դպրոցների վրա գումարները ծախսվում են միանգամայն աննպատակայարմար: Ցանկութիւն յայտնելով, որ դպրոցներում կրօնը պատշաճաւոր տեղ բռնի, Չելյշովը առաջարկում է, որ տարրական, գիւղական դպրոցներում դասաւանդութիւնը կատարվի գիւղացուն հասկանալի լեզուով և նրա կեանքին մօտիկ ձևով: Նա ցանկանում է, որ ուսուցիչները լինեն ոչ թէ նշանակովի, այլ ընտրողական սկզբունքով, և անպատճառ պէտք է նրանց ռոճիկները աւելացնել:

Այս ճառախօսից յետոյ սկսում են խօսել մի շարք քահանաներ աջակողմեաններից, որոնք ցանկանում են, որ ուսման մեծ մասը նուիրված լինի կրօնական պարապմունքներին, նացիօնալիստական գաղափարների հետ շաղկապված: Խիստ յարձակվում են ներկայ դպրոցի վրա, որ նա սաստիկ լիբերալ է: Միայն քահանայ Գեպեցկին աւելացնում է մի կէտ օրինագծին, որ գիւղական դպրոցները լինեն բացի տարրականից և աւելի բարձր դասարաններով:

Ժողովրդական ազատութեան կուսակցութեան անունից խօսում է պատգամաւոր Մասլեննիկովը: Բացատրելով իրանց վերաբերմունքը դէպի այդ օրինագծերը, ճառախօսը ցոյց է տալիս, որ այժմս միայն 35% ուսում առնողներ կան, և որ ահագին մասսան ուսման ծարաւով է բռնված: Մինիստրութիւնը հաշւել է, որպեսզի ներկայիս ուսման կարիքը քիչ թէ շատ կանոնաւորվի, անհրաժեշտ է 10 միլիօն րուբլի գումար, և չը նայած դրան, նոյն մինիստրութիւնը ներկայացնում է Դումային պահանջ միայն 5 և կէս միլիօն րուբլու: Եթէ կառավարութեան այդպիսի վերաբերմունքը դէպի ժողովրդական ուսուցման գործը կարելի է բացատրել յայտնի տակտիկայով,—ասում է Մասլեննիկովը,—միանգամայն անհասկանալի է մնում, թէ ինչպէս յայտնի կուսակցութեան պատկանող պատգամաւորներ կարողանում են համաձայնվել մինիստրութեան այդ առաջարկի հետ: Կադետական ֆրակցիան գտնում է, որ այդ օրինագծին պէտք է զանազան փոփոխութիւններ մտցնել և ահա թէ ինչպէս օրինագծում ասված է, որ այն 6,900 հազար րուբլուց 1,400 հազար ր. արդէն ծախսվում է, իսկ 1,900 հազար ր. յատկացվում է նոր դպրոցների շինութիւններ կառուցանելու համար: Ահա այստեղ մենք ցանկանում ենք աւելացնել 40 միլ. րուբլու մի գումար, որպէս զի այդ միջոցներով բացվեն ամեն մի յետ ընկած անկիւնում ժողովրդական դպրոցներ: Ներկայումս կարելի է բանալ 20,000 դպրոց, ամեն մէկում 50 մանուկ:

Ուրեմն, մէկ միլիօն մանուկ հնարաւորութիւն կը ստանայ ուսում առնելու, բայց այդ 1 միլ. մանուկները կը կազմեն ուսումնարանների միմիայն 7 տոկոսը: Եւ ահա, որպէս զի այդպիսի մի չնչին օգնութիւն հասցվի, հարկաւոր է 40 միլ. ր., որից այս տարի կարելի է միայն մի աննշան մասը ծախսել (4,000,000 ր.), եթէ աչքի առաջ ունենալ, որ օրինագիծը պէտք է անցնի Պետական Խորհրդով և Բարձրագոյն հաստատութիւն ստանայ, այնպէս որ 36 միլ. րուբլին կարելի է մտցնել գալ տարվայ պետական բիւջէտի մէջ:

Այստեղ կարող է միայն մի հարց լինել, թէ որտեղից գտնել այդ 40 միլ. րուբլին: Նախ կարելի է ներկայ բիւջէտից աւելացածները և կրճատումներից ստացված գումարները յատկացնել այդ նպատակին, իսկ եթէ հարկաւորվի յատուկ փոխառութիւն անել այդ նպատակով, ում մտքով անգամ կարող է անցնել, որ դա անտեղի է: Մի ուրիշ հակաճառութիւն էլ կայ, որ իբր այդքան դպրոցների համար չեն գտնվի ուսուցիչներ. դա ոչնչի վրա հիմնված չէ, որովհետև, ժող. մինիստրութեան պաշտօնական տեղեկութիւնները մինչև անգամ ցոյց են տալիս, որ 1906 թւականի անգործ ուսուցիչների թիւը հասել է 19,341 հոգու: (Ծափահարութիւններ ձախում):

Պատգամաւոր Տրչինինը նացիօնալիստների կողմից ողջունում է ներկայ օրինագիծը: Ինքը պատգամաւորը երկար ժամանակ եղել է ժողովրդական դպրոցների ինսպեկտոր և առանձին գուրգուրանքով է վերաբերվում գիւղական ուսուցիչներին: Վերջը նա գտնում է, որ զեմստվային, քաղաքային և այլ հաստատութիւնները իրանց նպաստները պէտք է մտցնեն պետական գանձարանը, իսկ ուսուցիչները իրանց ռոճիկները կանոնաւոր կերպով ստանան գանձարանից. այդպիսով թեթևացված կը լինի յայտնի չափով ուսուցիչների դրութիւնը:

Րոդիչեվը այդ օրը կարծես թէ տրամադրված չէր խօսելու: Նա այն միտքն էր արծարծում, որ ժողովրդական լուսաւորութեան գործում խնայողութիւնը անթոյլատրելի է և ամեն զոհողութիւններ պէտք է անել, որպէս զի ընդհանուր ուսման գործը պատշաճաւոր բարձրութեան վրա դրվի:

Այսպէս վերջացաւ այդ օրվայ նիստը:

Արսէն Քալանթար

ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ

II

Հացի պակասութիւն—սով:

Հաց... սով—այս է լսվում Վրաստանի ամեն կողմերից: Ամենագլխաւոր հոգսը և մտածմունքի առարկան այս է: Ամենահրատապ հարցը, որ զբաղեցնում է ժողովրդին մօտ և նրան սրտացաւ մարդուն՝ այս է: Հաց... Ու սովի ուրուականն է, որ խեղդում և իր ճիրաններում է առել և՛ վրացի գիւղացուն: Հացի պակասութիւնը միայն մեզ մօտ Կովկասում չէ: Դա այս չար և խառնաշփոթ ժամանակում ամենահիւանդոտ և օրվայ հարցն է համայն Ռուսաստանի համար:

Շինական հասարակութեան թշուառութիւնը, գիւղական ժողովրդի մեծամասնութեան աղքատութիւնը անհնելի չափով սփռվում են ամեն տեղ: Կրկնվում և շարունակ գրվում-ասվում է, որ գիւղը ընկել, գետնին է հաւասարվել, և փոխանակ նա պետութեան նպաստ տալու, պահելու և հարկաւոր ոյժ մատակարարելու՝ նրանից է այժմ ինքը օգնութիւն խնդրում, նրան է իր ձեռքը կարկառում՝ քաղցից ազատվելու: Մասնաւորապէս մեզանում, Կովկասում, արդէն վաղուց կարիքը, քաղցը, սովը իր անհելի հետևանքներով իրանց գլուխն են բարձրացրել:

Զերծ չէ և վրացի գիւղական ազգաբնակութիւնը. սա էլ վերջին ծայր թշուառութեան մէջ է: «Սովը սաստկանում է հետզհետէ... առնելու սիմինդր (եգիպտացորեն) էլ չենք ճարում»,—այս է լսվում Վրաստանի ամեն անկիւնից: «Վրաստանում չէ մնացել մի անկիւն, ուր հացի պակասութիւնը—սովը—թագաւորելիս չը լինի և կամ շեմքի մօտ կանգնած չը լինի»,—միաձայն վկայում են վրաց թերթերը:

Ամեն տեղ պակասել կամ պակասում է հացի պաշարը. եղածը թանգ ու կրակ, սովորական գներից բարձր, եռապատիկ ու քառապատիկ գներով: Սիմինդրը 80 կ.—1 ր., մի քանի տեղ (Շօրապանի գաւառ) մինչև 1 ր. 50 կ.: Մօտիկ ապագան աւելի է յուսահատեցնում... «Մեծ կարիք... այժմ, երբ գարունը չէ սկսված... մեզ ինչ է սպասում ամառվայ սկզբին»,—գրում են Գուրիայի կողմերից: Իսկ Կուխի գիւղից (Քութայիսի գաւ.) գրում են. «Մեր այժմեան կացութիւնը ոչ գրչով նկարագրել կարելի է և ոչ լեզուով ասել: Սովը եկել է մեր առաջը չոքել: Սիմինդրի վերջին մնացորդները մինչև մարտի վերջը մի կերպ քաշ կը տանք»: Այդ ժամանակ վաշխառուներն էլ մտնում են իրանց դերի մէջ. դրանք, այս նեղ օրերում, քաղցած գիւղացուն թւում են պահապան հրեշտակներ իրանց 30—50 տոկոսներով, «պակաս չի լինի» անգիր արած խօսքերով: Շատ մռայլ գոյներով են նկարագրում վրացի գաւառական թղթակիցները ժողովրդի դրութիւնը. մինչ այդ, տեղական իշխանութիւնը՝ գաւառապետը ուզում է հաւատացնել, որ «սուտ են թղթակիցների հաղորդած տեղեկութիւնները. Գուրիայում սով չը կայ... Իրօք սիմինդրը պակաս է, եղածն էլ ողորմելի... Կառավարութիւնը միջոցներ է ձեռք առել. լաւ սերմացու կը բաժանենք»:

Այսպիսի խօսքով է դիմել Սուփսա կայարանում գիւղացիներին, փետրվարի 20-ին, Օզուրգէթի գաւառապետը: Բայց իրողութիւնն այն է, որ ժողովուրդը հաց չունի: Կուշտը քաղցածին մանր կը բրդի: Պէտք է խոստովանել, որ մերոնք աւելի քաջ գտնվեցին, քան վրացիք. առաջուց կարիքի չափն ուսումնասիրեցին, դիմեցին, խնդրեցին և մի բան գոնէ դուրս եկաւ: Այդ հողի վրա վրացիք նոյնչափ ծառայութիւն չը մատուցին իրանց գիւղացուն, կարիքաւոր ժողովրդին: Վրացի շինականի, գիւղացու դրութիւնը աւելի ծանր է և դրան նպաստում է և այն հանգամանքը, որ նրանց մէջ կալուածատիրական կարգը տիրող է մեծ չափով, որ հողը գիւղացունը չէ, որ նա բերքի եկամուտի ահագին մասը տալիս է ուրիշին:

Ս. սարկ.

ԱՐՓԻԱՐԻ ՄԱՀԱՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ

—

Ստացանք—1) Թիֆլիսում, Սամսոն Զերքեզեանից՝ 5 ր., 2) Բագուից, Եղիշէ Ք. Գեղամեանից՝ 3 ր., Գիւտ Ք. Աղանեանից՝ 1 ր., Մենտոր Ռոստոմեանից՝ 5 ր., Մըկրտիչ Բարսեղեանից՝ 5 ր., Մխիթար Տէր-Անդրէասեանից՝ 1 ր., գումարն է 20 ր., որով մինչև այժմ ստացվածների հետ («Մշակ» № 64)—234 ր.:

ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ ԲԱԳՈՒՄ

—

Բագուի հասարակական ժողովարանի սենեակներից մէկում ներկայումս բացված է Գ. Բաշինջաղեանի նկարների ցուցահանդէսը:

---

*) Տես «Մշակ» № 58

Շարէշար ցուցադրված 29 մեծ ու փոքր իւղաներկ պատկերները ներկայացնում են այնպիսի տեսարանների մի ամբողջ հաւաքածու։ Օրը ամպամած էր, սենեակը՝ ոչ այնքան լուսաւոր. բայց և այնպէս տաղանդաւոր նկարչի հմուտ վրձինը կարողանում է այցելուի ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացնել բնութեան տեսարանների այն ժամանների վրա, որ յափշտակել և պատկերացրել է կտաւի վրա գեղարուեստագէտի ֆանտազիան։

Նկարների մեծ մասը, համարեա, վերջին ժամանակի աշխատութիւններ են. սակայն նրանց նիւթը, բնութեան այդ սքանչելի րոպէները՝ ով գիտէ թէ նա քանի տարիներ առաջ իր յիշողութեան մէջ պահելով այսօր ցուցադրում է այցելուի առաջ։

Այնտեղ կան մի քանի տեսարաններ, որոնց ես անձամբ ականատես եմ եղել։

Ահա առաւօտեան թանձր մշուշի միջից Մասիսը վեր է բարձրացրել իր ալեոր գլուխը՝ արեւածագի շողքը կատարին։

Ահա Էջմիածնի ճամբը, գիշերը Կասպիական անվրդով ծովի վրա լուսնի շողերով այցելած, գիշերը՝ Ալազանի վրա, Ալազանի հովիտը Սղնախի կողմից։ Նա, ով իր սեփական աչքերով դիտել է այդ տեսարանները, շուտ կարող է ըմբռնել, թէ որքան ճիշտ ու բնական են արտայայտված նրանք։ Հմուտ վրձինը կարողացել է նուրբ շարժումներով ընդգծել Ալազանի հովիտի ահագին տարածութիւնը իր բոլոր կոնտուրներով, ծառաստաններն ու կանաչ արտերը։

Այստեղ են մանաւանդ «Ձմեռային առաւօտը Ջիւանշիրի անտառում», ուր հալվող ձիւնի շերտերի տակ մանրակրկիտ կերպով պատկերացված են մամռապատ հաստաբուն ծառի արմատները, յատակի վրա ընկած ճղները, թփերը. «Առաւօտը Բորժոմի ձորերում», ուր նկարիչը պատկերացրել է հաստաբուն կաղնիների միջից վեհ խաղաղութեամբ սահող Կուր գետը։ Որտեղից նայելու լինեք, այցելուի ուշադրութիւնը նա իր վրա է դարձնում. գոյները՝ առանց չափազանցութեան, տեխնիքական աշխատանքը՝ նուրբ, կատարված խնամքով. կարծես, տեսարանի այդ վեհութիւնը անջինջ տպաւորելու համար։

Նկարչի հարուստ ֆանտազիան իր ստեղծագործութիւնները փնջել է ձոխ ու բազմակողմանի տեսարաններից. «Արտը հասուն հասկերով», որի վրա կուտակված ամպերը հեռզհեռէ հեռանում, հալվում ու կորչում են, «Բաթումի ծովը լուսնի ծագումի ժամանակ», «Գեօկ-Գեօլ լճը իր սիզաւէտ ափերով, կանաչազարդ ալիքներով», «Անիի աւերակ տաճարը՝ բնական ու կենդանի ներկերով», «Սեւանայ լիճը՝ վերջալոյսին», «Նոր-Բայազէտի մօտակայ կամուրջը քարէ, մամռապատ սիւներով», «Խուրձերի դէզը արտերի մէջ». մի կողմից տարածվում են սպիտակ ամպերը, իսկ միւս կողմում՝ մութ ու սեւ ամպերը, արդէն անձրեւում են. Թէև վերջինս այնքան էլ ռելիեֆ չէ արտայայտված։ Եւ այդ բոլորը դուրս է բերել մանրամասնօրէն նկարիչը, հոգի տալով նրանց։

Փոքրիկ բայց ուշագրաւ է Կազբէկը։

Բաշինջաղեանը առանց խուսափելու պատկերացնում է այնպիսի դժուարին տեսարաններ, ինչպիսին արտադրում է երկինքը և ջուրը, որոնք պահանջում են տեխնիքական լուրջ աշխատանք, մեծ նրբութիւն գոյների ու գծերի։

Բաշինջաղեանի վրձինը սիրում է գեղեցիկ, խաղաղ ու վեհ տեսարաններ։

Ցուցադրված պատկերներից բացի, նոյնքան էլ, և աւելի արժէք ունեցողները, թողել է Թիֆլիսում։

Ինչպէս լսեցի, Բաշինջաղեանը մօտ ժամանակներս աւարտել է մի նոր պատկեր՝ «Ծիածանը անձրեւից յետոյ»։ Ի միջի այլոց նա պատրաստում է մի քանի նկարներ ևս Շվեյցարական տեսարաններից՝ Իւնգ-Ֆրաու, Ձիլու-էլէն և այլն։

Յաճախորդների կողմից ցուցահանդէսը անհամեմատ թոյլ է, քան Թիֆլիսում. Բագւում գեղարուեստը, ըստ երեւոյթին, աւելի քիչ գնահատողներ և սիրողներ ունի։ Մի քանի երկրորդական նկարներ արդէն վաճառուած են։

Իսկ գեղարուեստական տեսակէտից արժէք ունեցողների համար՝ շռայլութեան մէջ չափ չը ճանաչող բագուեցին դեռ ևս սակարկում է...

Լ. Դանիէլեան

ԲՆԱԿԱՆ ԹԷ՞ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՄԱՀ

Ներկայ կեանքի աննորմալ պայմաններում չը կայ աւելի մեծ դժբաղդութիւն մարդու համար, քան մեռնել անբնական մահով։ Բայց մեռնել այդպէս անմեղ, խայտառակ մահով ինչի՞ համար. հայրենիքի ազատութեա՞ն. ո՛չ, ո՛չ. նիւթի և միմիայն նիւթի համար։

Նիւթից ծնված, նիւթով սնվող մարդը միշտ դէպի նիւթն է վազում և այդ նիւթի պատճառով էլ իր նմանին կեանքից զրկում։ Եւ դեռ այս չքնաղ, փարթամ ու ձոխ բնութիւնը տուած է մեզ վայելելու համար։ Բայց մէթէ մարդիկ թոյլ կը տան միմեանց խաղաղ սրտով, երջանկօրէն, մինչև կեանքի վերջը վայելելու այդ հրաշագեղ բնութիւնը, ուր, կարծես թէ, չը կայ մարդու համար աւելի մեծ բաւականութիւն և ուրախութիւն, քան զրկել իր նմանին կեանքից։ Եւ այսպէս քանի՜-քանի՜ անմեղ զոհեր ի զուր տեղը կուլ գնացին մարդկանց սրին ու գնդակին։ Բայց չէ՞ որ կեանքը քաղցր է և մարդ չէ ուզում բաժանվել նրանից։

Ուրեմն ինչո՞ւ զրկել մարդուն կեանքից։ Ինձ թւում է, թէ մենք ապրում ենք մարդկային հրէշաւոր կրքերի թագաւորութեան շրջանում, ուր այս իսկական դրախտ աշխարհը մարդկանց ձեռքով դժոխք է դարձել...

Օ՛, մարդկային անյագ կրքեր և գծուծ «ես». քանի՛-քանի՛ մատաղ կեանքեր դուք զոհեցիք։ Այժմ էլ դուք զոհում էք շարունակ, այնպէս որ այս լայնարձակ աշխարհը մարդու համար համատարած բանտ է խաւար, ուր նրա համար բնական մահով մեռնելը մեծ բաղդաւորութիւն է համարվում։ Բայց զրկվել կեանքից ում ձեռքով. իր նմանի՞. օ՛, սարսափելի է, սարսափելի։ Էլ ո՞ւր մնաց կրօնի և գիտութեան քարոզը՝ թէ «մի սպանիր»։

Ո՜րքան մարդկային զոհեր են տարել պատերազմները, քաղաքական նպատակները, անձնական հաշիւները, սիրահարութիւնները, վրէժխնդրութիւնը, գողութիւնը, աւազակութիւնը, մինչև իսկ գաղափարների ու կարծիքների տարբերութիւնը և այլն և այլն,—թերևս մի քանի անգամ աւելի, քան բնական մահը և վարակիչ հիւանդութիւնները, որոնց թւում և ժանտախտն ու խօլերան։ Եւ մարդ ակամայ գալիս է այն համոզման, որ, կարծես թէ, նմանը ծարաւի է նմանի արեան։ Իմ կարծիքով՝ ուրիշ բան չէ կարելի սպասել մսակեր, հետևապէս դաժանաբարոյ մարդկութիւնից։ Այսպէս մարդիկ պէտք է ոչնչացնեն, վերջ տան, կլանեն միմեանց, մինչև որ մի տարերային ույժ էլ վերջ տայ նրանց և սկսվի բնութեան տարրերի ամենահզօր և երջանիկ թագաւորութիւնը։ Բայց մինչև այդ՝ մարդկանց բարքը մեղմացնել և կեանքի անհարթութիւնները հարթել-վերացնել կարող է միայն կրթութիւնը, այն էլ իսկական կրթութիւնը։

Խ. Բաբայեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Կարս, 1 մարտի

Սրանից մի ամիս առաջ Կարսում երեւաց մի օտարական երիտասարդ։ Ինքը 21 տարեկան, ակնոցաւոր, Ներսիսեան դպրոցի աշակերտական հագուստով, կիսաուսանողական գտակով, Երուանդ Տիգրանովիչ Մխիթարեանց կոչւում։ Եկել էր իբր ուսուցչական ցենզ ձեռք բերելու, բայց չը գիտեմ աջողվեց թէ ոչ։ Թէ հայերէն և թէ ռուսերէն խօսում էր ազատ և ճարտար։ Իրա պատմելով յայտնի հարուստի որդի էր. Բագու ունեցել են նաւթի ֆոնտաններ, բնակվում են Թիֆլիսում, բնիկ երեւանցի են։ Ամեն տարի ամառը լինում են Շվէյցարիայում։ Ինքը եւրոպական բոլոր քաղաքները ոտի տակ է տուել, մտերմական յարաբերութիւն ունի յայտնի պետական անձանց հետ։ Վերջապէս ճարտարախօս պարոնը այնպիսի ձև էր տալիս իր պատմութեանը, որ անհաւատները անգամ հաւատում էին։ Ահա այդպիսի ճարտարութեամբ և ճարպիկութեամբ սրանից-նրանից, բոլորովին անծանօթներից, մի թեթև գումար դրամելով, անցագիրն էլ Կարս թողնելով, հիւրանոցի փողը չը վճարելով, հեռացաւ Կարսից, խոստանալով երեք օրից յետոյ պարտատէրերին բաւականութիւն տալ։ Բայց երեք օրը ամսից աւելի եղաւ։ Յայտնի հարուստի որդին տարած փողերը չը վերադարձրեց, և մենք հաստատ համոզված ենք, որ պարտատէրերը զուր են սպասում։ Ես մինչև անգամ կասկածում եմ—որ այդպիսի ազգանունով մարդ գոյութիւն չունի և նրա անցագիրն էլ կեղծ էր։ Արդեօք այդ միևնոյն պարոնը ուրիշ քաղաքներում էլ նոյն խաղը չէ՞ խաղացել։

Խնդրում ենք, ով որ ճանաչում է այսպիսի մի անձնաւորութեան, բարեհաճի տեղեկութիւն տալ և զգուշանալ այդպիսիներից։

Կարսեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի 50 պատուաւոր մահմեդականներ մի յատուկ պատգամաւորութիւն են ընտրել՝ Փոխարքայի յոբելեանի օրը ուղերձ ներկայացնելու համար։ Պատգամաւորութեան կազմում մտնում են «Մոլլա-Նասրէդդինի» խմբագիր Իբրահիմ աղա Վեքիլով, Դ. Մամէդ-Կուլի-զադէ, Քերիմ-բէկ Վեքիլով, Մամէդ-Ալի-բէկ Պալավդանով, Քերիմ-բէկ Նովրուզով, Աբդուլ-Կաֆար Սամեդով և Մամէդ-Հասան Իմամով։

◆ Կովկասի հայոց բարեգ. ընկերութեան կողմից շնորհաւորելու է Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովին, նրա յոբելեանի առիթով, առանձին պատգամաւորութիւն, որը կը ներկայացնի ուղերձ։

◆ Թիֆլիսի էժանագին և ձրի ճաշարանների ու թէյարանների ընկերութեան վարչութիւնը իր հերթական նիստում որոշել է մի պատգամաւորութիւն ընտրել Կովկասի Փոխարքայ Վորոնցով-Դաշկովի օֆիցերական ծառայութեան 50-ամեակը շնորհաւորելու համար և այդ օրը 500 ճաշ բաց թողնել Թիֆլիսի ամենաչքաւոր ազգաբնակութեան համար։

◆ Փոխադարձ գիւղատնտեսական վարկի ընկերութիւնը որոշել է շնորհաւորել Կովկասի Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի յոբելեանը մի յատուկ պատգամաւորութեան միջոցով, որ բաղկացած կը լինի ընկերութեան վարչութեան անդամներից։

◆ Թիֆլիսի երաժշտական ընկերութեան կօմիտէտը որոշել է մասնակցել կոմս Վորոնցով-Դաշկովի յոբելեանին և այդ նպատակով ընտրել է մի պատգամաւորութիւն։

◆ Վլադիկավկազի երկաթուղագծի ստորին ծառայողները Թիֆլիս են ուղարկել մի պատգամաւորութիւն Կովկասի Փոխարքայի յոբելեանը շնորհաւորելու համար։

◆ Մարտի 25-ի, երեքշաբթիվայ «Տարազի» համարը ամբողջովին նուիրված կը լինի Կովկասին։

◆ Թիֆլիսի նահանգապետը միջնորդել է Կովկասի Փոխարքայի առաջ, որ թոյլատրվի Ախալցխայի քաղաքային ինքնավարութեան՝ հանգանակութիւն բանալ Ախալցխայում միջնակարգ դպրոց բանալու համար։ Հանգանակութեան գործը կը կենտրոնանայ մի յատուկ յանձնաժողովի ձեռքում, որ բաղկացած կը լինի քաղաքային լիազօրներից և տեղական պաշտօնական ու մասնաւոր անձերից։ Ախալցխայում միջնակարգ դպրոց բանալու միտքը, որին թէ քաղաքը և թէ ամբողջ գաւառը մեծ կարիք է զգում, ծագեց դեռ 1903 թւին։ Այն ժամանակ ժողոված տեղեկութիւններից երեւաց, որ Ախալցխեան ամենից շատ առեւտրական դպրոցի կարիք ունի։ Ախալցխայի քաղաքային ինքնավարութիւնը, ոչ մի հնարաւորութիւն չունենալով որևէ գումար բաժին հանել այդ նպատակի համար իր դրամական սուղ միջոցներից, խոստանում է շինութեան համար յատկացնել մի հողաբաժին քաղաքի որևէ տեղում։ Միջոցներ գոյացնելու համար, Ախալցխայի քաղաքային աւագը 1904 թ. սեպտ. 26-ին ժողովարարութիւն սկսեց, որով 36 անձերից ժողովվեց 7075 րուբլի և, բացի դրանից, Գրիգոր և Կարապետ Բայբուրդցեանները նուիրեցին 25,000 ր.։

◆ Վաղը, երկուշաբթի, երեկոյեան ժամը 6-ին, կովկասագիտական բարձր դասընթացներում (Ալէքսանդրեան այգի) տեղի կունենայ Գ. Սմիրնովի դասախօսութիւնը Կովկասի օգտակար հանքերի մասին։ (Երկաթ)։

◆ Այսօր, կիրակի, կովկասեան բժշկական ընկերութեան դահլիճում (Գեօրգիեվսկի փող. № 4) տեղի կունենայ ժողովրդական ընթերցանութիւն. բժ. Ն. Խատիսեանը կը շարունակէ դասախօսել մարդու անատոմիայի և ֆիզիօլոգիայի մասին։ Սկիզբն է երեկոյեան ժամը 6-ին։ Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվեն նկարներ մոգական լապտերներով։ Մուտքը ձրի է։

◆ Այսօր, առ. ժամը $10^1/_2$-ին, Վարշաւեանի թատրոնում (Հավլաբար) Ա. Աբեղեան կը դասախօսէ «Ժողովրդական տընտեսութեան» մասին։ Մուտքը 5—10 կոպ.։

◆ Մարտի 19-ին, Թիֆլիսում, ոստիկանութիւնը խուզարկեց Թուրքական «Հէյրաթ» տպարանը, սակայն ոչինչ կասկածելի բան չը գտաւ։

◆ Այսօր Թիֆլիսում լոյս տեսաւ նոր շաբաթաթերթ «Наша Жизнь» անունով, որի խմբագիրն է Ի. Սօղիէվ։

◆ Վաղը, Թիֆլիսի քաղաքային Դումայի դահլիճում, նշանակված է Թիֆլիսի լրագրավաճառների ընկերութեան ժողովը։

◆ Թիֆլիսի նահանգապետը մարտի 21-ին քաղաքային վարչութեան ամբողջ կազմով դիտեց քաղաքային կարուձեւի օրիորդաց դպրոցը և քաղաքային Միքայէլեան արհեստաւորաց դպրոցը։

◆ Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութիւնը միջնորդել է Թիֆլիսի նահանգապետի առաջ, որ թոյլատրվի բանալ էժանագին գրադարան-ընթերցարան Հաւլաբարում։

◆ Բժշկա-քլինիկական լաբօրատօրիան միանում է Թիֆլիսի քլինիկական հիւանդանոցին։

◆ Ապրիլի 3-ին Կովկասի Փոխարքայի պալատում կայանալու է Ջրայեղձներին ազատող ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքի ընդհանուր ժողովը։

◆ Մարտի 20-ին նշանակված Թիֆլիսի դումայի նիստը չը կայացաւ, որովհետև եկել էին հազիւ 19 իրաւասուներ։

◆ Թիֆլիսի քաղաքագլուխը խնդրել է Թիֆլիսի ոստիկանապետից, որ մի յատուկ լիազօր անձն նշանակէ՝ մասնաւոր փոխատու գանձարանները վերաքննող մասնաժողովում ներկայ լինելու համար։

◆ Թիֆլիսի քաղաքային բժշկա-սանիտարական մարմնի տեղեկութիւններից երևում է, որ անցեալ 1907 թ. ընթացքում քաղաքային կենտրոնական հիւանդանոցից և նրա չորս բաժանմունքներից բժշկական օգնութիւն և խորհուրդ ստանալու դիմել են ընդամենը 70,174 հիւանդներ, որոնք միացեալ կերպով այցելել են 176,970 անգամ։ Ձրիաբար դեղօրայք են տրված 194,066 ռեցեպտներով։ Նոյն դարում քաղաքումս նկատվել են 2673 սովորական սուր վարակիչ հիւանդութեան դէպքեր։

◆ Ստացանք. 1) «Խարազանի» գրադարան № 1. «Նախապատմական մարդ», 13 նկարով. Հայկ Տէր-Աստուածատրեանի, գինն է 15 կոպէկ. 2) «Ցուցարարի» յաւելուածներ՝ ա) «Կարմիր ծաղիկ» աշակերտական պիէս չորս պատկերով և նոտաներով. փոխադրութիւն Ս. Գրիգորեանի, բ) «Դոն Պիէդրօ Կարուզօ» դրամա մէկ գործ. Ռօբերտ Բրակկօյի, թարգմ. Մարիի։

◆ «Մեր Ձայնը» թերթում կարդում ենք, որ Նոր-Նախիջևանի Խալիպեան ուսումնարանի շէնքը ծախվում է։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մարտի 22-ին, ցերեկվայ ժամը 9-ին, Պետրոպավլովսկայա և Կոնստանտինովսկայա փողոցների անկիւնում ատրճանակի հարուածներով անյայտ չարագործներ վիրաւորել են Մետեխի բանտի վերակացուներ Սիդոր Կօզմենկօյին և Նեստոր Նաստուսենկօյին։ Վիրաւորվածներին տարել են Միքայէլեան հիւանդանոցը։ Չարագործները անյայտացել են։

◆ Մարտի 21-ին, Նիկօլայեւսկայա փողոցում բնակվող Մարիա Կարաչեվան յայտնել է ոստիկանութեան, որ նոյն օրը, երեկոյեան ժամը 7-ին, երբ նա դուրս է եկել բնակարանից, դուռը բաց է թողել, որից ներս են մտել անյայտ գողեր և տարել են 800 րուբլի կանխիկ դրամ և 3960 րուբլու զանազան իրեղէններ, մի խաղարկուտոմս և այլ թղթեր։ Կասկածով ձերբակալված է ալէքսանդրօպոլցի Միքայէլ Պարունակեանցը։

◆ Մարտի 21-ին, երեկոյեան ժամը 7-ին, Կախետինսկայա և Ելիզավէտինսկայա փողոցների անկիւնում անյայտ չարագործներ վիրաւորել են քաղաքապահ Պետր Եակուշեվիչին և թաղական վերակացուի թեկնածու Իվան Շումակուին։

◆ Մարտի 20-ին, ցերեկվայ ժամը $2^1/_2$-ին, Սեմենովսկի փողոցով անցնելիս է լինում Ա. Դ.։ Յանկարծ մօտենում է նրան մի անյայտ մարդ և պահանջում է այն 2000 րուբլին, որի մասին նրան արդէն գրված էր։ Իբրև պատասխան՝ Ա. Դ. չարագործին հարուածում է ձեռնափայտով, որից վերջինս փախչում է։ Մարտի 21-ին ոստիկանութիւնը ձերբակալում է չարագործին։ Նա Նոր-Բայազէտի գ. բնակիչ է, Երամ Պետրոսեան անունով։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ «Баку» լրագրի խմբագրի պաշտօնում քաղաքապետի կողմից հաստատված է Ա. Ա. Բահաթրեանցը Գ. Խ. Ենգիբարեանի փոխարէն։

◆ Ապրիլին Բագու է գալու յայտնի գրող և հայկական գրականութեան հետ լաւ ծանօթ Իւ. Ա. Վեսելօվսկին, որ կարդալու է ռուսերէն լեզուով մի շարք դասախօսութիւններ հայկական նորագոյն գրականութիւնից։ («Б.»)

◆ Բագուի քաղաքապետը թոյլատրել է է Ս. Տ. Շահրազովին հրատարակել Բագւում իր խմբագրութեամբ և հրատարակութեամբ երեկոյեան օրաթերթ «Бакинскій Вечеръ» անունով։

◆ Խուզարկութիւնները հրէական տներում շարունակվում են։ Մարտի 28-ի գիշերը խուզարկել են Բօնդարնայա և Չադրօվայա փողոցների վրա գտնվող տները, Բագւում ապրելու համապատասխան թոյլտուութիւն չունեցողներին գտնելու նպատակով։

◆ Մօտ օրերս նաւթարդիւնաբերական բանուորների արհեստակցական միութեան Բալախանիի բիւրօյում ոստիկանութիւնը խիստ խուզարկութիւն է կատարել, սակայն դատապարտելի ոչինչ չէ գտել։ Կալանաւորվել են միութեան վարչութեան անդամներից մի քանի հոգի։ («Б.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ 1907 թւի յունվարի 1-ից մինչև 1908 թւի յունվարի 1-ը, ուրեմն մի ամբողջ տարվայ ընթացքում, Բրեմենի վրայով գաղթել են Ամերիկա 90,000 ռուսահպատակներ։ («Русь»)

◆ Պետական կօնտրօլեօրի տուած տեղեկութիւններից երևում է, որ ճապօնական պատերազմի յիշատակի համար պատրաստված շքանշանները կառավարութեան վրա նստել են 395 հազար րուբլի։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը ուղարկել է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին հետևեալ շրջաբերականը. «1906 թւի մայիսի 22-ի շրջաբերական կարգադրութեամբ իրաւունք էր վերապահված քաղաքային մանկավարժական խորհուրդներին 1872 թւի մայիսի 31-ի ուսումնարանական օրէնքի հիման վրա ազատել ուսումնարանների ջանասէր աշակերտներին փոխադրական քննութիւններից այն պայմանով, որպէսզի թոյլ աշակերտները ենթարկվէին այդ քննութիւններին ամառային արձակուրդներից յետոյ այն առարկաներից, որոնցից որ նրանք անբաւարար թւանշաններ ունեն։ Ի նկատի առնելով, որ այդ կանոնների մէջ պարզ կերպով մատնանշված են, որ աշակերտները անցած առարկաների դասընթացքներից քննութիւնները պէտք է տան իւրաքանչիւր ուսումնական տարվայ վերջում, անհրաժեշտ եմ համարում վերականգնել մինչև այդ շրջաբերականի հրատարակութիւնը գոյութիւն ունեցող կարգերը, ուստի խնդրում եմ առաջարկել քաղաքային մանկավարժական դպրոցների խորհուրդներին 1872 թւի մայիսի 31-ի կանոնների հիման վրա յիշեալ դպրոցներում իւրաքանչիւր ուսումնական տարվայ վերջում օրէնքի յօդուածի ճիշտ հիման վրա փոխադրական քննութիւն կատարել, իսկ մինիստրութեան 1906 թւի մայիսի 22-ի հրատարակած շրջաբերական կարգադրութիւնը համարել վերացված, և շրջանի միւս դպրոցներում (ուսուցչական ինստիտուտներում և սեմինարիաներում), ուր օրէնքով սահմանված են փոխադրական քննութիւններ, պէտք է տեղի ունենան օրէնքի մէջ յիշատակված հիմունքներով»։

◆ Կալանաւորված է սօց.-դեմօկրատական կուսակցութեան ուրալեան ամբողջ կօմիտէտը, որը եկած է եղել Չելեաբինսկ համագումար կազմելու։ Գիշերը Վերխնէ-Իսետի գործարանում ձերբակալված է սօց.-դեմօկրատների կուսակցութեան եկատերինբուրգեան կօմիտէտը։ («Речь»)

◆ Կիեվի գաղթականական կենտրոնական բիւրօն տեղեկութիւն է ստացել Ամերիկայում վերսկսված կրիզիսի մասին։ Շատ գործարաններ և ֆաբրիկաններ ընդհատել են իրանց աշխատանքները։ Բազմաթիւ բանուորներ մնացել են անգործ։ Բիւրօն վճռել է առ այժմ դադրեցնել գաղթականների փոխադրութիւնը։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գանձակ, 10 մարտի

«Մշակ» լրագրի № 20-րդում տպագրված Շուշի-Գանձակ ճանապարհի վարչութեան տեղեկագրից իմացանք, որ Գանձակի հասարակութիւնից ստացված է միայն 1880 ր., մինչդեռ, որքան իմանում ենք, այդ նպատակով հանգանակված գումարը շատ պէտք է եղած լինի։ Չենք իմանում ինչո՞ւ այսքան ժամանակ Գանձակի հանգանակիչ մասնախումբը հաշիւ չէ տուել, որով և զանազան իրաւացի ասէ-կօսէների տեղիք է տալիս հասարակութեանը։

Սպասում ենք, որ հանգանակիչ մասնախումբը օր առաջ մանրամասն հաշիւ կը տայ հասարակութեանը։

Աբգար

—

Գանձակ, 7 մարտի

Խնդրում եմ յանուն ժողովրդի շահերի տպագրել սոյն հաշուի քննութիւնը ձեր թերթի մօտակայ համարներից մէկում։

Ընդհանրապէս յայտնի է, թէ ինչ անմխիթար կացութեան մէջ է գտնվում հայ եկեղեցիների տնտեսական դրութիւնը, շնորհիւ զանազան բաղդախնդիր աշխարհական ու կղերական տզրուկների անկօնտրօլ կառավարութեան։

Այդպիսի վիճակի է ենթարկված եղել տարիների ընթացքում նաև Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցին, որը իր ունեցած ձոխ կալուածներով ու եկամուտներով տեղիս եկեղեցիների մէջ առաջին տեղն է բռնում։ Տասնեակ տարիների ընթացքում այդ եկեղեցու եկամուտներն ու կալուածները անարգել շահագործում են մի խումբ մարդիկ, իրանց աջակից ունենալով կղերը։

Այդ մօնօպօլիստների խմբակը մի առանձին ճարպիկութեամբ կարողանում էր տեղիս հասարակական գործերի ղեկը իր ձեռքում պահել երկար տարիների ընթացքում, և այդպիսով քողարկել հասարակութեան աչքից իր գործած զեղծումներն ու շահատակութիւնները։

Թէև իւրաքանչիւր տարի, ըստ կանոնադրութեան, այդ եկեղեցու հաշիւները քննվել են յատուկ հաշուատեսներից և հոգևոր իշխանութեան կողմից վաւերացվել, բայց և այնպէս այդ քննութիւններից ս. Յովհաննէս եկեղեցու ծխականները ոչ մի տեղեկութիւն չունեն։

Իբրև այդօրինակ դրութիւնը իրաւացի կասկած յարուցանելով ս. Յովհաննէս եկեղեցու ծխականների մէջ, անցեալ 1907 թ. փետրվարի 11-ի ընդհանուր ժողովն ընտրում է մի մարմին «վերստուգող յանձնաժողով» անուան տակ և լիազօրութիւն տալիս նրան՝ ս. Յովհաննէս եկեղեցու վերջին տասը տարվայ հաշիւները նորից մանրազննին վերաքննելու։

Միջանկեալ պէտք է ասել, որ այդ ժողովում տեղիս փոխանորդ Կորիւն վարդապետը և երէցփ. Ս. Բաբաքեխեանը ընդդէմ էին այդ հաշիւների վերաքննութեան, առարկելով թէ դրանք արդէն քննված և վաւերացված են, ուստի թէ աւելորդ է և թէ վիրաւորական նախկին քննիչների համար։ Սակայն ժողովը անուշադիր թողեց դրանց առարկութիւնները։

Ես, իբրև անդամ վերև յիշված վերստուգող յանձնաժողովի, ստանում եմ Գանձակի առաջնորդական փոխանորդի պաշտօնական գրութիւնը, 26 մարտի 1907 թ. № 90, որով ինձ և իմ ընկերներին տեղեկացնում է մեր ընտրվելու մասին և առաջարկում է հաշուեմատեանները ստանալ հոգևոր ատեանից և ձեռնարկել քննութեան։

Ի՞նչ էք կարծում, ընթերցող, այս գրութեան հեղինակ վարչութիւնը մի ամբողջ տարվայ ընթացքում մեր տրամադրութեան տակ է դրել միայն չորս տարվայ հաշուեմատեանները, այն է՝ 1902, 1903, 1904 և 1906 թ.թ., իսկ մնացած մատեանների մասին, չը նայելով իմ քանիցս թէ գրաւոր և թէ բանաւոր դիմումներին, տեղիս հոգևոր կամարիլլան ամեն անգամ պատասխանում է, թէ մնացեալ թւականների մատեանները գտնվում են Թիֆլիսի կօնսիստօրիայում, որի հետ հոգևոր կառավարութիւնը «դիպլօմատիական» բանակցութեան մէջ է մտել, բայց թէ ինչ հետևանք ունեցան դրանց բանակցութիւնները մի տարվայ ընթացքում, այդ միայն Ալլահին է յայտնի։

Նախքան մեր ձեռքի տակ եղած մատեանների քննութեան անցնելը, մի քանի խօսք ասենք մատեանների և առ հասարակ երէցփոխների հաշուեպահութեան ձևի մասին։

Մատեանները իրանցից ներկայացնում են մի-մի քաոս, զուրկ հաշուեպահական տարրական կանոններից, որից սատանան անգամ չէ կարող գլուխ հանել։ Օրինակ՝ գրված է—մոմից արդիւնք է ստացված—000 ր., տոկոս է ստացված—000. թէ ո՛րքան մոմ է եղել, և որքան վաճառվել, կամ ո՛րքան փողի % է, և որքան ժամանակի,—ոչինչ յայտնի չէ մեր երէցփոխների մատեաններից*)։

Ճիշտ, այդ հաշիւները նմանում են յայտնի «Խա խա»-ին, որոնց յաճախ պատահում էք խոհարարների և գործակատարների՝ իրանց խօզէյիններին ներկայացրած հաշիւների մէջ։

---

*) Պէտք է ասել, որ մոմի արդիւնքը մի շահաւէտ աղբիւր է ներկայանում մեր երէցփոխների համար։

Անհնարին է այդ մատեանները առանձին-առանձին քննել. առ առաւելն պէտք է մի քանի տարվանը միասին լինի, որովհետև պատահում էք, որ մի թւականում շինութիւնների վրա արած անհագին ծախսերը մտցված են հետևեալ տարվայ հաշւեմատեանում (երևի առաջի տարին նահանջ է եղել)։ Բանից երևում է, որ մեր երէցփոխները հաշիւները վարել են աթագան-բարագան մեթօդներով, որ թարգմանի հոգւոյն սրբոյ շնորհիւ։

Մատեանների մասին այս չափը բաւական համարելով, անցնենք բուն քննութեան։

Կը շարունակվի

—

Թիֆլիս, 19 մարտի

Մարսէյլի «Արմէնիա» թերթի № 38 խմբագրականի առիթով, որով կասկածի ներքև է դրվում Արմէնական կազմակերպութեան գոյութիւնը, պարտք ենք համարում յայտարարել, թէ «Արմէնական» կազմակերպութիւնը թէև ներշնչված է «Արմէնիայի» գաղափարներից, բայց ինքնուրոյն, անկախ և հայրենիքի իսկական պահանջներից ծնունդ առած յեղափոխական մի մարմին է, և որ զանազան առիթներով ընծայած է իր գոյութեան փայլուն ապացոյցները. բաւական է սրանցից յիշատակել Վանի ինքնապաշտպանութեան կռւի մէջ ցոյց տուած իր ամենակարևոր դերը։

«Արմէնիայի» խմբագրութիւնը, որ բոլորովին անկախ է, նմանապէս վարչական և ևլմտական ոչ մի պատասխանատւութիւն և կապակցութիւն չէ ունեցել «Արմէնական» կազմակերպութեան մէջ, ինչպէս որ տրամադրված է «Արմէնական» կազմակերպութեան 1895 թ. բարեփոխեալ ծրագրի մէջ։

Գալով Պէօզիկեանին, նա ևս մէկն է նրա անդամներից և նրա mandataire-ը. ուստի բացայայտ է, որ այդ խմբագրականով բարդված մեղադրանքը հեռու է ճշմարտութիւնից։

Ի դիմաց Գաղթ. Միութեան Երկ. կազմ. գ. շրջանակի
Մասնաճիւղ

—

Թիֆլիս, 19 մարտի

Վեց ամսից ի վեր ստացված է և մնում է մեզ մօտ մի նամակ «Օհանէս Արզումանեան» հասցէով։ Հակառակ մեր հարց ու փորձին, այդ պարոնին գտնել կարելի չէ եղել։ Խնդրում ենք, ով որ գիտէ այդ պարոնի հասցէն՝ թող մեզ յայտնէ։

Կարծում ենք, որ կարևոր նամակ է այդ՝ տիրոջ համար։

Մեր հասցէն է՝ Սերգէևսկայա փ. № 7։
Որդիք Բ. Արզումանեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Չէտաների յարձակումը.—«Cor. Bureau» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից, որ մարտի 8-ին մի անտառում յարձակում գործվեց ութ զինւորների և երկու ժանդարմի վրա, որոնք ուղեկցում էին Սերեսի սանջակի Մէլնիկը շուկայից վերադարձող բուլղար գիւղացիներին։ Բոլոր զինւորները և ժանդարմները սպանվեցին, իսկ գիւղացիները մնացին անվնաս։ Թիւրքական իշխանութիւնների տեղեկութիւնների համեմատ, յարձակումը կատարել է չէտաների յայտնի պարագլուխ Սանդանսկին, որի հրամանով սպանվեցին Սարաֆով և Գարվանով։ Կալանաւորված են բուլղար ութ գիւղացիներ հարևան գիւղերից։ Եռանդուն միջոցներ են ձեռք առնված յանցաւորներին գտնելու համար։

Մարդակերներ.—Րէյտէրի գործակալութեանը հեռագրում են Սիդնէյից, որ Ծովապետութեան կղզիների վրա վայրենիները յարձակվեցին չորս տեղացիների վրա, որոնք գնացել էին ուտեստի պաշարներ որոնելու, և կերան։ Գերմանական Նոր-Գվինէից արշաւախումբ է ուղարկված մարդակերներին պատժելու համար։

Ժուռնալիստների բողոքը.—Վերջապէս գերմանական ժուռնալիստների կոնֆլիկտը պատգամաւոր Գրէբէրի հետ կարգադրված է։ Այդ առիթով ղեկավարող շրջաններում խորհրդակցութիւններ էին կատարվում, որովհետև ժուռնալիստները, վիրաւորված զգալով իրանց Գրէբէրի խօսքերից, այլ ևս դադարեցին պարլամենտը յաճախելուց։ Վերջապէս Գրէբէր նիստի վերջում հետևեալ բացատրութիւնները տուեց։

Րէյխստագի մարտի 6-ի նիստում պատգամաւոր Էրցբէրգէր, խօսելով գաղթականութեան քաղաքականութեան մասին, հետևեալ նախադասութիւնն ասաց. «Տեղացիները նոյնպիսի մարդիկ են, ինչպէս և ամենքը. նրանք ևս անմահ հոգի ունեն, որը կոչված է դէպի բարձրագոյն նպատակը»։ Այդ նախադասութիւնը աղմուկ և ծիծաղ յարուցեց ժուռնալիստների տրիբունում, որից յետոյ լսվեցին զայրոյթի բացականչութիւններ կենտրոնում և նախագահի զանգահարութիւնը։ Զայրոյթն արտայայտողներից մէկն էլ ես էի։ Ժուռնալիստների ծիծաղն այնքան վիրաւորական էր, որ ակամայ ստիպում էր կարծել, թէ ժուռնալիստները դիտաւորութիւն ունէին ծաղրել պատգամաւոր Էրցբէրգէրին, որպէս վարվեցին ինձ հետ րէյխստագի մարտի 3-ի նիստում և որի համար նախագահը կարգի հրաւիրեց նրանց։ Եւ եթէ ես, յիշելով այդ վիրաւորանքը և թէ ժուռնալիստների վերին աստիճանի թեթևամիտ վերաբերմունքը դէպի մի այդպիսի լուրջ հարց, չափազանց տաքացայ և թոյլ տուի ինձ ծիծաղողների հասցէին ոչ-պարլամենտական նախադասութիւն, խնդրում եմ դրա համար ներողութիւն (բրաւօ,—րէյխստագի զանազան կողմերից)։

Ժուռնալիստները ընթերցարանի դահլիճը գնացին խորհրդակցելու համար. երկարատև վիճաբանութիւններից յետոյ 70 ձայների մեծամասնութեամբ 2-ի դէմ հետևեալ որոշումը կայացրին։

«Պարլամենտական մամուլի ներկայացուցիչները ընդունում են Գրէբէրի ներողութիւնը։ Ընդունելով րէյխստագի ցանկութիւնը հարթել իր անդամներից մէկի սխալը, ժուռնալիստները պատրաստակամութիւն են յայտնում երեքշաբթի օրից կրկին սկսել աշխատանքը պարլամենտում»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

22 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գիշերս բալտիական նաւաշինարանում հրդեհ ծագեց. այրվեց շինութեան այն մասը, ուր գտնվում էին էլեքտրական պարագաները։ Վնասը 150,000 րուբլուց անցնում է։

Տեղական տնտեսութեան գործերի մասնաժողովում նպատակայարմար ընդունվեց իրաւունք տալ քաղաքներին ելնելու նահանգական և գաւառական զէմստվօների կազմից։

Արդիւնաբերութեան և առևտրի ներկայացուցիչների երրորդ հերթական համագումարը տեղի կունենայ Պետերբուրգում, մարտի 27-ին։

Սենատը անուշադիր թողեց «Народный Голосъ» և «Извѣстія» լրագիրների խմբագիր Շիրսկու վճռաջինջ բողոքագիրը։ Շիրսկին դատաստանական պալատից դատապարտվել էր $1^1/_2$ տարով բանտարկութեան։ Սենատը նաև անհետևանք թողեց պրիվատ-դոցենտ Անիչկովի վճռաջինջ բողոքագիրը։ Անիչկովը դատապարտվել է $1^1/_2$ ամսով բանտարկութեան գիւղացիական միութեանը պատկանելուն համար։

Պետերբուրգի դատաստանական պալատը, քննելով «Современная Жизнь» լրագրի հրատարակիչ Սօյկինի և խմբագիր Զարինի գործը, որոնք մեղադրվում են 103-րդ և 129-րդ յօդուածներով, դատապարտեց Զարինին $1^1/_2$ տարվայ բանտարկութեան, իսկ Սօյկինին՝ 100 րուբլի տուգանքի։

Արտաքին

21 մարտի

ՎԻԵՆՆԱ։ Նիստը վերսկսելով, պատգամաւորների պալատը ձեռնարկեց հերթականապէս քննել նորակոչ զինւորների օրինագիծը։ Նախահաշւի մասնաժողովում գերմանացի և չեխ հռետորները յայտնեցին, որ թէև նրանք գոհ չեն կառավարութեան արած յայտարարութիւններից, բայց և այնպէս պատրաստ են նրան աջակցել Բոհէմիայում լեզուի հարցը լուծելու գործում՝ առանձին օրէնք հրատարակելով. ընդմին, սակայն, նրանք պնդեցին իրանց ազգային և քաղաքական իրաւունքների պաշտպանութեան վրա։ Նախահաշւի մասնաժողովը ընդունեց արդարադատութեան մինիստրութեան նախահաշիւը։

ԲԵՐԼԻՆ։ Ժողովների և միութիւնների օրինագծի առաջին կէտը ասում է. «Կայսրութեան բոլոր քաղաքացիները իրաւունք ունեն միութիւններ և ժողովներ կազմել քրէական օրէնքներին չը հակասող նպատակների համար»։ Մասնաժողովը առաջարկում էր, որ ժողովներում ոստիկանութիւն լինի ապահովութեան համար։ Պատգամաւորներից մէկը առաջարկեց մտցնել մի կէտ ևս, որով իրաւունք տրվէր օտարազգիներին ևս մասնակցել։ Ստատս-սեկրետար Բետման-Գօլվէգ յայտնեց, որ դաշնակից պետութիւններից և ոչ մէկում այնպիսի օրէնք գոյութիւն չունի, որի համաձայն օտարազգիներն էլ իրաւունք ունենան մասնակցել ժողովներին և միութիւններին։ Ժողովների նախնական արգելքի հարցի վերաբերութեամբ մինիստրը ասաց, որ ինչպէս Պրուսիայում այդպիսի արգելք թոյլատրելի չէ, այնպէս էլ կը լինի և ամբողջ Գերմանիայում։

22 մարտի

ԼՈՆԴՈՆ։ Լամանշում, գիշերային վարժութիւնների ժամանակ, «Բերվիկ» ականաւը ընդհարվեց «Տեգլ» յածանաւին։ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, զոհվել են 36 հոգի։

ԼՈՆԴՈՆ։ «Դէյլի Տելեգրաֆին» հաղորդում են Տօկիօից, որ Ռուսաստանի ադմինիստրատիվ իրաւունքների դէմ Ամերիկայի յարուցած առարկութիւնները շօշափում են նաև Եապօնիային, նկատի առնելով այն հանգամանքը, որ Ռուսաստանը և Եապօնիան փոխադարձաբար ճանաչում են միմեանց ադմինիստրատիվ ֆունկցիաները Մանջուրիայի երկաթուղագծի շրջանում։ Տօկիօի իշխանութիւնները մատնանշում են, որ չինական արևելեան երկաթուղագծի պայմանագրի 6-րդ յօդուածը, որով Ռուսաստանին ադմինիստրացիայի բացարձակ և անսահմանափակ իրաւունք է տրվում այդ շրջանում, զրկում է Ամերիկային իր ոյժերը լարելու հնարաւորութիւնից։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ՇՄԵՂԻ
Հարուստը կռապաշտ
գրքոյկը 28 էջ գինն է 8 կոպ.
(Ե. Կ.) 10—1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕՆԵՎԱ—$9^1/_2$—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

Թիֆլիսից Բագու	Բագուից Թիֆլիս
Արագ. գիշ. 12 ժ. 28 ր.	Արագ. երեկ. 5 ժ. 02 ր.
Պօստ. երեկ. 9 ժ. 41 ր.	Պօստ. ցեր. 12 ժ. 21 ր.
Մարդ. առաւ. 7 ժ. 53 ր.	Մարդ. առաւ. 4 ժ. 58 ր.
Թիֆլիսից Բաթում	**Բաթումից Թիֆլիս**
Մարդ. առաւ. 10 ժ. 58 ր.	Մարդ. առաւ. 10 ժ. 38 ր.
Պօստ. առաւ. 9 ժ. 15 ր.	Պօստ. առաւ. 6 ժ. 49 ր.
Մարդ. երեկ. 11 ժ. 22 ր.	Մարդ. երեկ. 5 ժ. 46 ր.
Թիֆլիսից Երևան	**Երևանից Թիֆլիս**
Պօստ. գիշ. 1 ժ. 8 ր.	Պօստ. ցերեկ. 1 ժ. 18 ր.
Մ.-ապր. ցեր. 3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ա.գ. 12 ժ. 52 ր.
Կարսից Ալէքսանդ.	**Ալէքսանդր. Կարս**
Պօստ. երեկ. 5 ժ. 48 ր.	Պօստ. ցերեկ. 12 ժ. 23 ր.
*)Մ.-ապր. առ. 5 ժ. 25 ր.	*)Մ.-ապր. գիշ. 3 ժ. 09 ր.
Թիֆլիսից Ջուլֆա	**Ջուլֆայից Թիֆլիս**
Պօստ. գիշ. 1 ժ. 08 ր.	Պօստ. գիշ. 6 ժ. 48 ր.
Մ.-ապր. ցեր. 3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ցեր. 6 ժ. 54 ր.

---

*) Այս գնացքները երթևեկում են միայն պէտք եղած ժամանակ։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների, որ մարտի 31-ին, երկուշաբթի, նշանակված է ընդհանուր ժողով Թիֆլիսի ժողովարանի կանդիդատներ առաջարկված անձանց քուէարկելու համար։

Սկիզբն է երեկոյեան ժամը 9-ին։

(23, 28, 30) 3—1

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլոլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—20

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Յարութիւն Թումանեանի
Ռուս-հայերէն
◆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲԱՌԱՐԱՆ ◆
Գինը՝ 75 կոպ., ճանապարհածախսով 1 ր.
(408 երես. 10,000 բառ)

◇ ԽՕԼԵՐ ◇
Վօդըվիլ մէկ արարուածով
Երկրորդ տպագրութիւն, բարեփոխված
ԳԻՆԸ 20 ԿՈՊ.
Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Чавчавадзевская № 25-а
(Հ. Կ.) 10—9

Փորձված սերմեր
ՍԵՐՄԵՐ
ցանելու համար
ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ
ԾԱՂԿԱՅԻՆ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
Պրէյսկուրանտ ուղարկվում է ձրի
Кавказское Т-во Сѣмянного Хозяйства Квеесъ и К-о
Тифлисъ, Михайловск. пр. № 55.
25—9

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
կիրակի, մարտի 23-ին
ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ
մասնակցութեամբ
դերասանուհի օր. Աղամեանի և դերասան պ. Ա. Արմէնեանի
կը ներկայացվի
ԱՒԱԶԱԿՆԵՐ
ողբերգ. Շիլլերի, 5 գործ.
Մասնակցում են՝ օր. Աղամեան, պ. պ. Ա. Արմէնեան, Գ. Իֆէկեան, Վ. Միրզօյեան և ուրիշներ։
Սկիզբը ժամը 8-ին
Տեղերի գները սովորական են
Ռեժիսեօր՝ Ա. Արմէնեան
Հայոց դրամատիկ. ընկերութ. վարչութիւն
(Հ. Կ.) 2—2

Առաջին Կովկասեան Պահեստ
ՍԵՐՄԵՐԻ
ԼԱՐՇԷ
Գոյութիւն ունի 1872 թւից
№ 23, Միխայլովսկի պր., № 23
առաջարկում է
ՍԵՐՄԵՐ
ԼԱՒԱԳՈՅՆ ՏԵՍԱԿԻ
բանջարանոցի
ծաղիկների
խոտերի
ծառերի
ՓՈՐՁՎԱԾ
Յայտնի ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ բաղդադի։ Տուփիգինն է—6 մսխալը—2 րուբլի։ Գումարով գնողներին զեղչ։
(ա. օ.) 10—1

ЗАЧѢМЪ ОСТАВАТЬСЯ ТОЛСТЫМЪ?

Знаменитые порошки
Д-ра МАРКОНИ
изготовляемые Хим. Фарм. Общ. „ФАКИРЪ" въ Берлинѣ W15.
теперь можно получить почти во всѣхъ Аптекахъ и Аптекарскихъ магазинахъ Россіи.
Еженедѣльно уменьшаютъ вѣсъ отъ 2—4 фнт.
Это единственное, разумное, вѣрно дѣйствующее и при томъ вполнѣ безвредное для здоровья средство.
„Медицинскій совѣтъ журнальнымъ постановленіемъ отъ 12 декабря „1906 г. за № 846 призналъ возможнымъ разрѣшить ввозъ въ Россію означеннаго средства, въ качествѣ врачебнаго средства, для продажи изъ „аптекъ безъ рецептовъ врачей, и изъ аптекарскихъ магазиновъ.
Цѣна за коробку хватающую на 1 мѣсяцъ 3 рубля, тройная коробка 7 рублей.
Главный складъ въ Москвѣ у Е. Беверъ, Покровка, д. Арбатскихъ.
Թիֆլիսում, Կովկասեան ընկերութեան դեղագործական ապրանքների վաճառատանը և ուրիշների մօտ։
(1, 8, 23, 8, 23). 5—3

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ
Իսկականը այս կլէյմօն ունի իր վրա։
ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԷՕՊՕԼԴ ՆԵՑՇԵԼԼԵՐ"
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
ՌԻԳԱՅՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՈՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՅՈՒՄ
ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ
ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԵՆՏՈՒՄ
Նիժէգորոդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ
ԱՅՍՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան
Կրէմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.
(Հ. Կ.) 100—13

Типографія „Экономія" Авана Мугдусіакопова съ С-ми.
Большая Вѣнкская, д. Семинаріи № 3.